



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ՆԱԽԿԻՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԱՆԱՆ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵԼ ՄԱՏՐԱՎՆ ՄԵԶ**

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու նախօրեակին, Երեքաբթի, 18 Դեկետեմբերի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ ընդունեց Բարեշնորի Շաֆֆի Սրբ. Կարապետեանի առաջնորդութեամբ խումբ մը նախկին բանտարկեալներ, որոնք եկած եին խոստովանանքի եւ Ս. Հաղորդութիւն ստանալու:

Արարողութիւնը տեղի ունեցաւ «Ս. Տրդատ եւ Ս. Աշխել» մատրան մէջ: Առաջնորդ Սրբազանին կողքին արարողութեան մասնակցեցան Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովինսերէն Արք. S. Արտակ Զիևյ. Տեմիրճեան: Ներկայ եին նաեւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան եւ ՀՕՍԻ Շրջանային Վարչութեան անդամներ, որոնք աւելի ուշ ճաշով հիւրասիրեցին ուխտաւոր Երիտասարդները:

### **Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ**

Առաջին հերթին, հիւր Երիտասարդները, թիւով աւելի քան 20, առաջնորդութեան Ս. «Տրդատ եւ Ս. Աշխել» մատուր, ուր տեղի ունեցաւ Տէր Ողորմեայի յատուկ արարողութիւն: Ապա, Շաֆֆի Սարկաւագ կարդաց մեղայականը ու Երիտասարդները, ծնրադիր, մասնակցեցան խոստովանանքի արարողութեան: Ս. Հաղորդութիւնը մատուցեցին Յայր Միւռոն ու Տէր Արտակ:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը հիւրերը ընդունեց Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ, ուր ստեղծուեցաւ մտերմիկ մթնոլորտ: Խրախուսական խօսքերով արտայայտութիւններ ունեցան յաջորդաբար՝ Շաֆֆի Սարկաւագ, Տոքթ. Յ. Տէր Մկրտիչեան, ՀՕՍԻ Շրջ. Վարչութեան ատենապետուիի Տիկ. Սոնիա Փելթեքեան, Յայր Միւռոն եւ Վերջապես՝ Առաջնորդ Սրբազանը: Անոնք ողջունեցին ուխտադիր Երիտասարդները, գոհունակութիւն յայտնեցին, որ անոնք որոշած են հրաժարիլ խոտոր ուղիներէ ու կը հետեւին Ս. Գրային սերտողութեան պահերու: Անոնք թելադրեցին, որ այս ընթացքը շարունակուի անսահանց: Ներկայ Երիտասարդներէն մէկ քանին արտայայտուեցան իրենց դժուարին փորձառութիւններուն մասին ու գոհունակութիւն արտայայտեցին, որ Ազգ.

Առաջնորդարանն ու Շաֆֆի Սարկաւագ նման հոգածու Վերաբերմունք կը ցուցաբերեն իրենց հանդէա:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուերներ յանձնեց իիւր Երիտասարդներուն:

Նշենք, որ Շաֆֆի Սրկ. եւ հոգեւոր հայրեր, Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, կանոնաւոր հերթականութեամբ կ'այցելեն Լոս Անձելըսի շրջանի բանտերը ու հոգեւոր մատակարարութիւն կը տրամադրեն հայ բանտարկեալներու: Նմանապէս հոգածութիւն կը ցուցաբերուի բանտեն արձակուողներու, որպէսզի անոնք շրջանցեն ընկերութեան Վերամիանալու դժուարին հանգրուանը:

## ՅԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Դահլիճին մեջ տեղի ունեցած մտերմիկ հանդիպումն ետք, խումբը ուղղուեցաւ «Տիգրան եւ Զարուհի Տէր Դազարեան» սրահ, ուր ՀՕՄի Շրջանային Վարչութեան կողմէ հիւրասիրուեցաւ ճաշով:

Այս առիթով, իիւր Երիտասարդները Առաջնորդ Սրբազանին յանձնեցին յուշանուեր մը, որուն վրայ ստորագրած էին բոլորը:

Ինչպէս դահլիճին մեջ հանդիպումի պահուն, նոյնպէս ալ սրահին մեջ, ՀՕՄի նուիրեալները այս միութեան ժողովրդանուեր գործունեութեան մասին լուսաբանութիւններ տուին Երիտասարդներուն, նշեցին, որ ՀՕՄը եւս հոգածու է բանտարկեալներուն հանդէա, ու պատրաստակամութիւն յայտնեցին օժանդակութիւն տրամադրելու անոնց, եթէ աշխատանքի կամ այլ հարցերու համար խորհրդատուութեան կարիք ունենան:

## FORMER INMATES RECEIVE HOLY COMMUNION AT THE PRELACY ST. DERTAD AND ST. ASHKHEN CHAPEL

On Tuesday, December 18, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Chaplain Raffi Garabedian and a group of former inmates who had come to receive Holy Communion at the St. Dertad and St. Ashken Chapel. Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian and St. Mary's pastor Rev. Ardag Demirjian participated in the service while Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian and members of the Armenian Relief Society Regional Executive attended.

Upon their arrival, the group of more than twenty youth was escorted to the Chapel where they participated in group confession prior to receiving Communion. The Prelate then invited them to the reception room where encouraging remarks were offered by the Prelate, Chaplain Raffi, Dr. Der Megerdichian, and ARS Regional Executive Chair Mrs. Sonia Peltekian, all of whom conveyed their satisfaction that the youth had made the decision to change their lives around and follow the Word of God.

The opportunity was offered for the youth themselves to convey their remarks, a few of whom described their circumstances and expressed gratitude to the Prelacy and Chaplain Raffi for their guidance and care.

The group then headed to the Dikran and Zarouhi Der Ghazarian Hall where lunch was hosted by the ARS Western Region. During lunch, the youth presented the Prelate with a memento that was signed by the group members. Members of the ARS also had the chance to inform the youth of the services their organization provides and expressed their readiness to assist the youth in any manner necessary.